

ՊԵՏՄԵՐԱԿԱՆ

ԶԱԼԱԼԻՔ ԿԱՄ ԶԷԼԱԼԻՆԵՐ

Ճէլալիներու ծագման իրրե պատճառ ժամանակակից հայ պատմիչները կը մտանանչեն Սուլթան Մահմէտ Գ.ի (1594-1603) ապիկար վարչութիւնը. — Դաւրիժեցի, Վաղարշապատ, 1896, էջ 568-9, Դարանաղչի, Երուսաղէմ, 1915, էջ 13-15.

Ճէլալիներու ապստամբական և աւերիչ գործունէութեան ամենէն նշանաւոր գէմքերը կը հանդիսանան Նազըճի (Ապտիւլ Հալիմ) և եղբայրը Տէլի Հասան. — Հմմտ. Էն, Հայոց Պատմութիւն, Գ. հատոր, Երեւան, 1946, էջ 230.

Յազըճիի շարազէտ ապստամբութեան սկզբնաւորութիւնը կը դրուի 1597ին. «Թ՛վին ՌեՉ ոմն ապստամբ Ազիճի անուն ել ի միջոյ իրեանց և ապստամբոցոց զբազումս ընդ իւր և անթիւ զօրս դումարեաց և ապահանհաց զբազում գաւառքս: Նախ ամբացաւ յամուր զգեկին Եղեարտի մի ամ և կէս». — Դարանաղչի, էջ 24: Հմմտ. Դաւրիժեցի, էջ 632.

Դաւրիժեցիին կարգ մը մանրամասնութիւններ և թուականներ ալ կու տայ մեզի. «Դարձեալ ի սոյն թուին զօրացաւ Ղարայեաղիչին, և էսո զՈւրհայու բերդն [ՌեՒՔ = 1599] Հոկտեմբերի Թ [= 9] յաւուր յերեքշաբթի, որ և յառաջագոյն ի քաղաքն էր»:

«Այս Եաղիչիս աշխարհաւ էր կապազովկիոյ(*), սուխթայ գոլով՝ և ժամանակս ինչ եկաց ի յՈւրհայ առ մօլլայ մի ուսման աղագաւ և յետոյ եղև թ՛ֆանքչի՝ և եկաց զինուորութեամբ ի սպասաւորութիւն այ-

(*) Հաւանաբար Չոսուժ գիւղաքաղաքէն. սոյ ի թագաւորական տունէ էր և ոչ ի մեծ ազգէ, այլ գոհնիկ և ոչինչ քան զամենայն մարդիկ». — Դաւրիժեցի, էջ 569.

Ուրիչներու համաձայն, Ենիշէրիներու որսորդ գունդին գնդապետներէն էր Դարահազըճի և ինքզինքը ին Պէնիշէտտաւ ընտանիքէն սերած կը համարէր և զրոյց հանած էր թէ Մարգարէն իրեն երևցած էր և իրեն խոստացած Փոքր Ասիոյ վեհապետութիւնը. — Ալլոյսյանեան, Պատմ. Հայ կեսարիոյ, Ա. էջ 602.

ւոց իշխանաց. յաղթող ի պատերազմունս, և յետոյ ինքնազուխ եղեալ ժողովեաց զընկերս՝ ապստամբեալ ի թագաւորէն, բազմացոյց զզօրս իւր, մինչ զի առկին թէ զերեսուն և զվեց հազարապետս ունէր, որ Բօլուկբաշի կոչէին». — Դաւրիժեցի, էջ 632.

Նոյն թուականին «Հուսէյն փաշայն ապստամբեցաւ ի թագաւորէն և կողոպտեաց զբազում տեղիս և եկեալ պաշարեաց զԵսաբիա. և ի նոյն ամին գնացեալ յՈւրհայ միաբանեցաւ ընդ Եաղիչուն: Եւ եօթն մարդ ի գլխաւորաց քաղաքին սպան Եաղիչին. զոմանս կախելով, զոմանս խեղդելով, զի որն պարոն էր և որն չափուչ, և ինքն արեաց քաղաքին, և յիւրմէ փախուցեալ էր փոխանորդն փաշային». — Դաւրիժեցի, էջ 633.

«Դարձեալ ի նոյն թուին, Հոկտեմբերի ԺԵ [15]ին, յաւուր երկուշաբթի, Փիալայ փաշայն և Մախսուտ բէկն եկին ի վերայ Եաղիչուն յՈւրհայ, և սաստիկ պատերազմ արարին ի զիմաց սուրբ դաստառակին և ոչ կարացին առնուլ զնոս»:

«Դարձեալ ի սոյն թուին Հոկտեմբերի տասն և ութին եկն վէղիքն, որ փոխանորդ է թագաւորին, Մահմէտ փաշայ կոչեցեալ, սա եկն ի վերայ Եաղիչուն յՈւրհայ և խտարեցաւ ի քաղաքն, եօթանասուն և երեք օր». — Դաւրիժեցի, էջ 633.

Պաշարողները շատ քանք թափեցին ներս մտնելու բայց չյաջողեցան: «Յոր կողմն որ խրամահատէին ի զբսեէն՝ նա ի ներքուստ արագ արագ ամբընէր ի զիշերի: Եւ յորժամ որ ոչ կարացին առնուլ զբերդն քաղաքովն» առաջարկեցին որ ապըստամբ Հիւսէյն փաշան իրենց ձեռքը յանձնուի և իրենք թողուն երթան: «Նա՛ զառաջինն ոչ կամեցաւ տալ. նա՛ քաղաքացիքն և իւր զօրքն ամենեքեան միտքան աղագակեցին թէ՛ տո՛ւր զինչ նոքա խընդրեն, զի կու նեղիմք յերեսաց սովին. լաւ է մին մարդ կորնչել, քան մեք ամենեքեանքս: Յակամայ և ի հարկէ կուտր ի

(*) Վէղիքը (Սարտար) 40 կամ 50 հազար զօրք ժողովեց Ամիթի մէջ և զնաց Ուրհայ Եաղիչին դէմ, բայց չկրցաւ յաղթել ապստամբին և ձեռնառնայն ետ դարձաւ. — Հմմտ. Դաւրիժեցի, էջ 86 և 569, Ազարիա Սաանեցի, Հանդ. Ամս., 1930, էջ 327-8.

ձեռն նոցա, և նոքա կախեցին զպարսպէն և իջուցին առ նոսա: Եւ նոքա առեալ զնոցին ի բաց և այլ ոչ կամեցան պատե-
րազմել առ ժամանակ միս: — Գարանազ-
ցի, էջ 25: Հմմտ. Գաւրիմեցի, էջ 633-4, որ իբրև թուական նշանակուած է Ռեթթ [= 1600]:

«Եւ յետ այնորիկ երկուցեալ ի թագա-
ւորէն, զուցէ աշխարհագուժար ժողովով զայցեն ի վերայ և ի նեղ արկանն կքա-
ղաքն վասն չքաւորութեան ամենայն պի-
տայից մարդոյ և անասնոյ, և ինքն իբրովի ել արաքս ամենայն զօրօքն և զնոց ուր և կամեցաւ: Եւ զառաջին ոչ ասնէին աւար և թալան և կամ փնաս ուժեք, բայց ի պիտայից կերակրոց մարդոց և անասնոց: Եւ եկին ի Չոսոմայ երկիրն և անդ ձմեռեցին և ոչ ընդ ուժեք մարանչել և կամ փնաս ասնել կամէին, որ ի Բաբերգու քա-
ղաքէն ուժանք վաճառական հայերք պա-
մեցին մեզ թէ՛ մինչ մեք զայաք յԼասամ-
բուէն, և եկեալ պատահեցաք Աղիճուն և առաջներովն անցաք, նա՛ քնաւ չխօսեցան ընդ մեզ, այլ քաղցրութեամբ և աղաչելով ողորմութիւն խնդրեցին, որպէս զմուրացիկս մին գաստառակ սփռելով ի վերայ ճանա-
պարհին: Զինչ մեր յօժարութիւնն և կարն էր՝ արկաք և անցաք. նա՛ շնորհակալ ե-
ղեն և չար ուժեք ո՛չ խօսեցան և անցաք և եկաք խաղաղութեամբս:»

«Եւ անպէն ի նոյն երկիրն մեռաւ Ա-
ղիճին իւր մահուամբն և եղին հեծելա-
զօրքն զեզրայր Աղիճուն ի տեղի եզրօրն և ամենեքեան հնազանդ եղեն նմա:» — Գարանազցի, էջ 25-6:

Գաւրիմեցիի պատմութիւնը սակայն տարբեր կերպով կը պատկերացնէ Նազըճիի ընթացքը: Մահմէտ փաշայի հետանալէն ետք (Ռեթթ, Գեկտ. 24 չր. օր) «Դարաշ-
եաղիչին շարչարեաց զԱրճա սաստիկ հար-
կապահանջութեամբ(*), և զլխատեաց քա-
հանայ մի Արբահամ անուն, և զայր մի տանուաէր Աքանդար անուն, Յունուարի քսան և երկու, յաւուր երեքշաբաթիս:» — Գաւրիմեցի, էջ 634, Հմմտ. նաև էջ 569-570:

«Գարձեալ ի սոյն թուին Դարաշեաղի-
չին տիրեաց թոխթայ՝ և Ամասիոյ՝ և Մարդուանու(*): Չոսոմայ, և եղև սոգս: — Գաւրիմեցի, էջ 634:

«Թուին Ռեթթ [= 1601] տիրեաց Դարա-
եաղիչին զԱրաստար կողողանով և այ-
րելով և զքաղաքս կոտորելով, և եղև սոգ մեծս: — Գաւրիմեցի, էջ 634, Ալպո-
յաճեան, Պատմ. Եւզոպիոյ Հայոց, էջ 276:

Արաստարոյ շրջակայ գիւղերը կ'աւեր-
ուին և կ'անմարդանան: Քաղաքին երկու
հազար տուն հայերէն կը մնայ միայն 600
տուն, միւսները կը ցրուին, կը հետանան.
— Լեհացի Սիմէոն Կպիր, Ազգագրութիւն,
Վիեննա, 1836, էջ 188-9:

«Գարձեալ ի սոյն թուին Դարաշեաղի-
չին յազմեաց Իբրահիմ փաշային ի Կեսար-
իա:» — Գաւրիմեցի, էջ 634:

Ըստ Գաւրիմեցիի Ռեթթ = 1602 թիւին
սասակեցաւ Դարաշեաղիչին» (էջ 634):
Ուրիշներ կը գրեն թէ Մօքքօլու Հասան
փաշան Աէփէթլիի մէջ վերջնապէս յազմեց
Գարաեաղըճիին, որ խոյս տուաւ զէպի
Ճանիկի լիւնները, ուր մեռաւ իր ստացած
վէրքերէն: — Ալպոյաճեան, Պատմ. Հայ
Կեսարիոյ, էջ 605:

Նազըճիի մահէն ետք իրեն կը յաջորդէ
եզրայրը Տեյի Հասան կամ Հասան Ակի:
Գարանազցի սուպէս կը շարունակէ իր
պատմութիւնը: Արաստարոյ փաշան իրենց
վրայ պատերազմի կ'երթայ և կը պար-
տուի և փախչելով կ'ապաստանի Արաս-
տարոյ: Հասան պէկի զօրքերը կը հետապն-
դեն զայն և կը կոտորեն փաշային զին-
ուորները: Փաշան կը փութայ պաշտպա-
նուի միջնաբերդին մէջ, իսկ Հասան պէկի
զինուորները անխնայ կը ջարդեն հայ ու
տաճիկ քաղաքացիները, որոնցմէ շատեր
մազապուրծ փախչելով կը պահուըտին
լիւններու մէջ:

Մինչ ըմբոսաները ամբռնութիւններուն
դէմ կը մարանչէին, լուր կը հասնի թէ ըն-
տամպօղէն Հասան փաշան կու գայ Հասան
պէկի դէմ կուտելու: Ասոր վրայ ըմբոսաները

(*) «Եւ զխարաջն (զլխահարկ) զոր հանապաղ
թագաւորն ստնայր ի ժողովրդոց, այն Նազիչիս
զերկու տարւոյ խարաջն ինքն էաւ, և իւրոց
զօրացն ոսճիկս բաժանեաց»: — Գաւրիմեցի,
էջ 86:

(*) Ուրիշ տեղ մը յիշած է նաև Բուրայի և
Անկիւրիայ քաղաքները: — Գաւրիմեցի, էջ 86:
Յիշատակագիր մըն ալ Ուրտայէն ետք կը զնէ
Մալաթիան: «Եւ տարի մի այլ եկեալ Մալաթիա
բնակեալ և զնոսա այլ թալանեալ և մերկայու-
ցեալ ի հոգեոր և ի մարմնաւոր բարութեանց:» —
Ալպոյաճեան, Պատմ. Եւզոպիոյ Հայոց, էջ 1571:
Ալպոյաճեան, Պատմ. Եւզոպիոյ Հայոց, էջ 1571:

կը չուեն դէպի կողմնիս կամ Ճիւղ-Ղարս-
սար: Վէպիր Հասան փաշան իր ընտանիքը
և գոյքերը Ասիթէն Թօխատ բերել տալու
համար մարդ գրկած էր. Հասան պէկ երբ
կ'իմանայ թէ փաշային ընտանիքը կ'անցնի
կամասի քովէն, կը փութայ անոնց դէմ
և յանկարծակի յարձակելով կը կողոպտէ
զանոնք և շատեր գերի կը բռնէ: Բայց
փաշային կրնը կը յաջողի պահուելով քա-
րայրի մը մէջ, ուրկէ կ'ազատուի հայ ծե-
րունիի մը միջոցաւ, ու ապա կը տարուի
Թօխաթ՝ փաշային քով. — Հմտ. Դարա-
նաղցի, էջ 26-29:

«Եւ Հասան պէկն յորժամ ետես զիւր
աջողութիւնն ի վերին զօրութիւնէն լինե-
լով՝ դարձեալ ուժ առեալ զբո՛ւ տալով
զնաց ի Թօխաթ ի վերայ փաշային ի պա-
տերազմ: Եւ վազիրին երկուցեալ յերեսաց
նոցա, ելեալ ամրացեալ ի բերդն Եւզոկ-
իոյ: Եւ ջալալիքն եկեալ յանդիման բեր-
դին, ուժգին ձայնիւ զոչէին և հայհոյէ-
ին . . . Եւ յետ այս անորգանացս վերայ՝
զփաշան այլ սպանին թվանգով, յորժամ
հայէր ի պատուհանէն դէպի ջալալիքն, ի
նշան առին ի գիմացէն և սպանին» . —
Դարանաղցի, էջ 29-30:

Դարանաղցիի գրածներուն վրայ կան
ուրիշ աւելցուելիք ծանօթութիւններ: Այս-
պէս. իր եղբորը վրէժը լուծելու համար
Հասան պէկ կը յարձակի Սօքքուու Հասան
փաշային վրայ և զայն մինչև Թօգատ կը
քշէ: Հոն քաղաքին խրամներուն մէջ կը
սպաննուի Հասան փաշան և քաղաքը կ'իյ-
նայ ապստամբներուն ձեռքը. — Պատմ. Հայ
Կեսարիոյ, էջ 605:

Ղարա Եազըճի Տէլի Հասանի Թօխաթ
մուտքի թուականն է 1602 Մայիս 29 ըբ. :
Իր զօրքերը ամբողջ քաղաքը անխնայ
կ'աւարեն ու կ'աւերեն: Բնակիչներէն շա-
տեր կը փախչին կ'երթան Կ. Պոլիս, Պրու-
սա, Էտիրնէ, Ուսուսէլի (Թրակիա), Ֆրան-
սա, Պուլտան (Հունգարիա), Լեհաստան,
Սրիւմ, և Պարսկաստան (*): Այնպէս որ
քաղաքին հազար տուն հայերէն կը մնայ
հինգ հարիւր տուն միայն. — Ստեփանոս
Երէց Թօխաթցի, Ողբ ի վերայ Եւզոկիւս

(*) Լեհացի Սիմէոն Դպիր կը գրէ. «Եւ կայր
Մըսր [= Գահրէ] հայ աւելի քան զԹՃ [= 200]
տուն, ամէնն ձէլալոց փախուցեալ» . — Ուղե-
գրութիւն, էջ 217:

Մեծ քաղաքին: Ալիշան. Հայագատում,
էջ 605-608: Նոյն նիւթին վրայ նաև Յա-
կոս Երէց Բաթուկեանց Թօխաթցի, անդ, էջ
608-610: Դաւրիժեցի էջ 88, 147-8, Լե-
հացի, էջ 187: Պատմ. Եւզոկիոյ Հայոց,
էջ 278, 285:

Յաջորդ տարին, 1603ին, սանձեալ
Հասան պէկ անուն ճէլալի եկեալ է աստի
քաղաքս Բսթահիւս, և այրեալ է զքաղաքս,
և երկու եկեղեցիքս ի հետ այրեցան, զՍր.
Աստուածածին և զՍր. Թորոսն» . — Պատմ.
Հայ Կեսարիոյ, էջ 605 ծնթ. :

Դարանաղցիի համաձայն երկու տարի
վերջ ՌԾԻ (1605) թուին «Եկն Ազիճուն եղ-
բայր ջալալի Հասան պէկն ի յԼստամբուլս
երեք հարիւր ձիաւորօք, որ այլքն կոտո-
րեր էին ի պատերազմին, և հնազանդ եղև
թագաւորին, և ետուն փաշայութիւն ի
վերայ Պոստնայի ազգացն, և անդէն սպա-
նին Պոստնացիքն զինքն և ամենայն ջալալի
զօրսն իւր վասն չարութեան իւրեանց» . —
Դարանաղցի, էջ 92: Հմտ. Պատմ. Հայ
Կեսարիոյ, էջ 605-6:

Երկրորդարար նշանաւոր ջալալի ա-
պրստամբներ կը հանդիսանան Ղարաղաշ,
Թաւուլ, և Ճանփուտ, որոնց մասին ե-
ղած համոտտ տեղեկութիւնները կը ներ-
կայացնենք ստորև:

Ղարաղաւ (1600-1604). — Ասոր գոր-
ծունէութիւնը կ'ընդգրկէ մօտ հինգ տար-
ուան շրջան մը: Ան իբրև ապստամբ կ'ե-
րեր 1600 թուին. — Դաւրիժեցի, էջ 634:

Երեք տարի ետք, 1603ին, իր մասին
կը կարգանք. «Ղարաղաշ անուն զօրպա-
պաշի բազում զօրօք ջալալովք եկն նստաւ
յերզնկան» . — Դարանաղցի, էջ 41:

Անոնք քաղաքը կը հրկիզեն, շատ
մզկիթներ կ'այրին, բայց հօթը եկեղեցի-
ներ անվնաս կը մնան. — Դարանաղցի, էջ
144:

Իր հրոսակները կ'աւերեն նաև Բա-
բերդի շրջակայ գիւղերը. — Նոյն, էջ 42:

Նոյն տարին Գրիգոր վրդ. Դարանաղցի
Բաբերդի մէջ կը գրէ. «Ի դառն և յանբարի
ժամանակիս, որ կրկին սկիզբն եղև յա-
րուցման Ջալալոցն և խուռն աւերման աշ-
խարհիս Հայոց» . — Տաշեան, Յուցակ Զե-
ռագրաց, էջ 410:

Հաւանաբար նոյն տարին Թոգատն ալ
կ'ենթարկուի իր աւերածութեան: Թոգատ-

ցի Ստեփանոս երէց, որ Կաֆայ ապաստանած էր, 1604 թուին յիշատակարանի մը մէջ կը գրէ. «յետ Ղարսեազըճուն՝ Ղարազազ պօլուկ պաշին եկաւ կրկին էրեց և աւերեց զԹոխաթ և ամենեքեան հլաք փոխտական եկաք ի աստուածաշէն և ի տիրախնամ մայրաքաղաքս ի Կաֆանո». — Պատմ. Եւզոկիոյ Հայոց, էջ 1574:

Յաջորդ տարին, 1604ին, օսմանեան զօրաց սպարապետ Ճղալի սրդի փաշան, որ պարսից զէմ պատերազմի կ'երթար, կը հասնի Մերաստիա և զանազան խոստումներով կը յաջողի ջալալիները հնազանդեցնել և տանիլ պարսից զէմ կողմը: Նախ Ղարաղաշը կու գայ իր զինուորներով և ապա Թուրքիներ. — Դարանազցի, էջ 43: Դուրբեցի, էջ 634:

Ջալալի զօրքերը Արզրուճի գաշաին մէջ շատ չարքներ կը գործեն. — Դարանազցի, էջ 44-5:

Պատերազմէն ետք Ղարաղաշ կը կարգուի Մալաթիոյ փաշայ, և հոն իր գործած անօրէնութեան համար կը սպաննուի տեղացի իշխանի մը սրդիին ձեռքով, և իր չար զօրքերը կը ցրուին. — Դարանազցի, էջ 46-8:

Թաւուլի ապստամբութիւնը կը սկսի ըստ Դուրբեցիի 1603ին (էջ 634), Ան ունէր 12000 մարդ (նոյն, էջ 87): Նոյն պատմիչին համաձայն 1608 թուին «աւերեաց Թաւուլ անուն ջալալին զՍարքերգու գուտուն և զԲալոււայ» (էջ 636), Թաւուլի ապստամբութեանց շուրջ աւելի մանրամասն տեղեկութիւններ կու տայ Արապլոն սրկ. Բարբերգացի, իր 1608ին գրած մէկ յիշատակարանին մէջ, այսպէս. «... պիղծ Թաւուլն եկեալ ժՌ հեծելօք ի յերկիրն Կիլիկեաց և առեալ զԱտանայ, զԹարսիս, զՍիս, զՂարս և բազում աւեր էած և ԵՃ արու մատաղ տղայք գերի տարաւ ի Ատանոյ: Եւ անտի զիմեալ ի վրայ երկրին Մարաշոյ աւերելով և եկեալ հասաւ ի Սեփաստիայ և անտի եկեալ ի Եկեղեցաց գուտուն և բազում աւեր էած աշխարհի մինչև ի մեծ ծովեզերն Եփեսոս, ի վերին Եւ անտի զարձեալ եկն ի Կոնիոն, ի Գաղատիայ, ի Կաստամունի և անտի ի մեծն Պոնտոս Տրապէզս և այրեաց զքաղաքս զայս և զնաց կրկին ի Երզնէկան» (Հանդ. Ամս. 1936, էջ 337):

Այս ահարկու չարագործին ապաստանութեանց վերջ մը կը դնէ Գուլուճու Մուրատ փաշան (Դարանազցի, էջ 143-4):

Ճանփողաւ Ալի փաշան կ'ըլլայ վերջին երևելի ջալալին: Դուրբեցի 1605 թուին կը դնէ անոր ապստամբութիւնը:

«ՌՕԴ թուին ապստամբեցաւ Ջանփուլատ Ալի փաշայն, որ էր ամիրայ Բիլիտու, և զօրացեալ սա էսա զՇալապ քաղաքն, և տիրեաց նմա ամս երկու և կէս, ապրտամբեալ ի թագաւորէն». — Դուրբեցի, էջ 635:

Ապա 1608 թուին սառաքեաց Սուլթան Ահմատն զՄուրատ փաշայն ի վերայ Ջանփողատցի Ալի փաշային ի Հալապ, և եկեալ կատարեաց զզօրս նորա ի գաշաին, որ կոչի Կօգարչինուկ, և զինքն փոխտական արար. — Դուրբեցի, էջ 636:

Դարանազցիի համաձայն Ճանփուլատ, Բիլիսի աէրը, 1606ին կը դառնայ ջալալի և կը նեղէ Հալապն ու Շամը: Ապա Մուրատ փաշա կը կատարէ անոր զօրքերը Հալապի մէջ, որուն վրայ Ճանփուլատ կ'երթայ Կ. Պոլիս և հպատակութիւն կը յայտնէ Սուլթան Ահմէտ առաջինին (1603-1617): Թագաւորը իրեն կու տայ Պուտուճի փաշայութիւնը, ուր երթալէն քիչ ետքը կը սպաննուի. — Դարանազցի, էջ 101:

Ջալալիներու ապստամբութիւնը վերջացնելու պատիւը ուրեմն կը պատկանի Սուլթան Ահմէտին, և մանաւանդ իր կարող զօրավար Գուլուճու Մուրատ փաշային, որ 1608 Դեկտ. 18ին, ստարիուկէս անգուլ անխոնջ աշխատանքէ ետքը, յաղթական փռոքով մայրաքաղաք մտաւ. — Օրմանեան, Ազգապատում, էջ 2308: Հմտ. նաև Դարանազցի, էջ 18-19, և 144:

* * *

Ճէլալիներու կատարած հարստահարութեանց և անոնց յաջորդող ահաւոր սովին պատճառով անթիւ հայեր գաղթականի ցուպը ձեռք առած և հեռացած էին իւրեանց հայրենի տուներէն: Մեծ թիւ մը գացած ապաստանած էր Կ. Պոլիս, ուր նախապէս հաղիւ թէ ութսուն տուն տեղացի հայ կը գտնուէր ըստ Լեհացի Սիմէոն զպրի. մինչդեռ 1608 Սեպտ. 10ին, իր գրածին համաձայն «եկն և ղարիպն աւելի քան

զքատասուն հազար տուն ի Ստամբուլ, Ղալաթա և Սկուտարն: Քանդի յօթանասան ձէլալիքն աւիրել էին. և ամենեքեան հալածեալք և փոխուցեալք անդ էին հանգուցեալք: Եւ թէ հաշուես ի Պուզտանայ մինչև Ստամբուլ, պոթուեն Ուսուժէլին մինչև մեծն Վանատիկ, նա չկայ քաղաք, գեղ կամ շքտլիկ, որ հայ չկենայ: — Ուղեգրութիւն, էջ 8:

Սուրատ փաշա, իր զօպիչ արշաւանքէն երբ յաղթական կը վերադառնայ, քիչ ետք թագաւորէն հրաման կը հանէ որ պանդուխտները իրենց տեղերը վերադառնան. շատեր սակայն զանազան միջոցներով կը մնան և. Պոլիս և Թրակիա (Դարանաղցի, էջ 145-7): Բայց եօթ հազար հոգիէ աւելի քալուսթիւն մը, Հայ և Տաճիկ, ստիպուած կը վերադառնան իրենց նախկին բնակավայրերը (Դարանաղցի, էջ 148):

Ճամբուն վրայ կը տեսնեն որ ջալալիներու մնացորդներէն Սուրթատ անուն զօրազուլու մը վրան զարկած է Հաճի-Համգա ըսուած տեղը, բայց տուն վերադարձող դաղթականներու կարաւանին չարիք մը չ'ընենք. — Դարանաղցի, էջ 149:

Ջալալիներու յարուցած խռովութիւնները յատկապէս վատթարացուցին երուսաղէմի միաբանութեան վիճակը: Որովհետև անոնք «վրդովեցին զերկիրն ամենայն, և եղեն հայ ազգս խեղճ և ողորմելի, և յերուսաղէմ հարկատուութենէն ոչ կարաց բառնալ, և եղին զամենայն խաչ և աւետարան և եկեղեցիս գրաւ ի քովն տաճկաց, և էր պարտքն իէՌ [= 27000] զըլ.» — Պողարեան, Յուցակ Ձեռ. երուսաղէմի, Գ. էջ 194:

«Ճէլալիներու վախը տիրապետած էր ամէնքին. Սուրբ Աթոռի միաբաններէն ոչ ոք չէր համարձակեր նուիրահաւաքութեան համար Բերիայէն անդին անցնիլ. դադրած էր նաև ուխտաւորներու երթևեկը» երուսաղէմ. — Սաւալանեանց, Պատմ. երուսաղէմի, էջ 564:

Այդ տագնապալի և վտանգաւոր շրջանին նախախնամութիւնը տնօրինած էր որ Ս. Յակոբեանց վանքը ունենայ իր անձնուէր վարիչը յանձին Պարոնտէր Գրիգոր պատրիարքի:

ԵՐԵՍՈՒՆ ՏԱՐԻ ԱՌԱՋ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԵՒ ԿԱԹՈՂԻԿԷ ԲԱՌԵՐՈՒ ԼՈՒՍԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

Կաթողիկոս և կաթողիկէ յունարէն բառ մըն է, քաթոլիֆո'ս, քաթոլիֆի', որ բարդուած է քաթա' (պէս, բս) և օ'լոս (հանուր, ամբողջ, ամենայն) ածականէն, և կը նշանակէ ընդհանրական:

Կաթողիկէ բառը նիկիական հանգանկով նուիրագործուած է իբրև ստորոգելի քրիստոնէական եկեղեցոյն. «Հաւատամք և ի մի միայն ընդհանրական (= կաթողիկէ) եկեղեցին»: Այսինքն, առանց յարանուանութեան, Յիսուս Բրիտտասի մի եկեղեցին, որ ընդհանրական է և կը պատկանի բոլոր ազգերու հաւատացեալներու ամբողջութեան, այսինքն՝ չի պատկանիր միայն հայուն կամ հոսոմին կամ լատինին՝ զատ զատ: Եւ իրօք այսպիսի ազգայնական և յարանուանական առանձին ըմբռնումներ և հասկացողութիւններ չկային քրիստոնէական աշխարհի մէջ, Քաղկեդոնի ժողովէն (451) առաջ, և եկեղեցի ըսուած ատեն կը հասկցուէր Բրիտտասի՝ եկեղեցին, որ մեկ է, ընդհանրական (կաթողիկէ) է, սուսեւելական է և սուրբ է:

Փալով կաթողիկոս բառին, շատ հին է ստոր գործածութիւնն ալ Հայոց մէջ, քահանայապետի և եպիսկոպոսապետի իմաստով, նոյնպէս Վրաց և Աղուանից եկեղեցեաց մէջ:

Ասորի եկեղեցոյն ալ հովուապետը կը կոչուի Կաթուլիկո (cathoulico), այնպէս որ բառը թէև օտար, բայց ուրիշ շատ մը բաներու պէս, հայացած է բոլորովին և նուիրագործուած է Հայ պատմութեան և Հայ եկեղեցոյ մէջ:

Հուսաւորէն սկսեալ իր բոլոր սերունդին եպիսկոպոսապետները մինչև Ս. Սահակ, Կաթողիկոս անունը փոռաւորած են, ստոր տալով սրբազան պաշտօնին բարձր իմաստը, նուիրական ըմբռնումը և արժանիքի ու գիրքի վսեմ հասկացողութիւնը:

Ն. ԵՊՍ. ԾՈՎԱԿԱՆ

(Սիոն, 1928 Յունիս, էջ 183-184):